ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 55-Լ

«05» 08 2025թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի 1 հաստիքը նույն դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր

դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22 N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 21-րդ գլխի 79-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 4» բառերը՝ «Դատախազության ավագ դատախազ 5», իսկ 80-րդ կետի «Դատախազության դատախազ 10» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 9» բառերով,

2) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 29-րդ գլխի 111-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3», իսկ «Ընդամենը 16» բառերը՝ «Ընդամենը 15» բառերով,

3) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 9-րդ գլխի 32-րդ կետի «Վարչության դատախազ 7» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 8» իսկ «Ընդամենը 17» բառերը՝ «Ընդամենը 18» բառերով,

4) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 15-րդ գլխի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 140» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 141» բառերով,

5) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 33-րդ գլխի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 114» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 113» բառերով,

6) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 140» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 141» բառերով,

7) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 114» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 113» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական

դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**